

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՑՎՈՂ ԵՎ ՉԴԵՏԵՐՄԻՆԱՑՎՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Դետերմինանտ տերմինը լեզվաբանական գրականության մեջ մուծել է Ն. Յու. Շվեդովան¹։ Ըստ Շվեդովայի և այլոց՝ դետերմինանտները շարահյուսական ինքնուրույն այնպիսի միավորներ են, որոնք լեզվական տարբեր կառույցներում կապվում են ոչ թե այս կամ այն անդամի հետ, այլ վերաբերում են ամբողջ նախադասության կառուցվածքա-իմաստաբանական հիմքին։ Օրինակ՝ Մեզ մոտ հիմա սպիտակ գիշերներ են։ Երիտասարդների առաջ բաց են բոլոր ճանապարհները։ Ամենուրեք՝ դրոշներ են²։ Այս նախադասություններում ընդգծվածները դետերմինանտներ են համարվում։ Ըստ նշանակության առանձնացվում են դետերմինանտների երկու խումբ՝ պարագայական և սուբյեկտա-օբյեկտային։ Պարագայական դետերմինանտը կարող է ընդարձակել նախադասությունը այս կամ այն կոնկրետ հանգամանքների տեսակետից, որոնց ընթացքում տեղի է ունենում այն, ինչի մասին հաղորդվում է, իսկ սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտը ցույց է տալիս առարկան կամ անձը, որ հարաբերություն ունի մի բանի նկատմամբ, որի (կամ ինչի) մասին հաղորդվում է նախադասության մեջ։ Օրինակ՝ Ինձ համար դա լավ էլք է։ Կոմբիտականին նման ախարք վայել չէ։ Այս օրինակներում առանձնացված բառերը սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտներ են։ Դետերմինանտների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար դիտարկենք երկու նախադասություն։ Հայաստանում զբոսաշրջիկները բարձրացել են Արագածի լանջերը, տեսել են Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը, եղել են Սևանում, հիացել կապուտակ լճի գեղեցկությամբ։ Մայիսին բացվում է վարդը, վարդի հետ տրոփում են մեր սրտերը, բնությունը զմրուխտ է հագնում ու կանչում իր գիրկը։ Այս նախադասություններում ընդգծված բառերը ընդհանուր պարագաներ են կամ դետերմինանտներ³։ Առաջին նախադասության մեջ Հայաստանում բառը ընդհանուր տեղի պարագա է չորս խմբի ստորոգյալների համար, երկրորդում՝ մայիսին ընդհանուր ժամանակի պարագա է դարձյալ չորս խմբի ստորոգյալների համար։ Դիտարկվող նախադասություններում ըստ հաջորդականության ցույց են տրվում համապատասխան տեղի և ժամանակի այն հատվածները, որոնցում կատարվում կամ տեղի է ունենում այն, ինչի մասին հաղորդվում է ասույթի մնացած մասում։ Ուսումնասիրվող օրինակներում եթե անտեսենք ստորոգյալները, նախադասությունները կիմաստազրկվեն, իսկ եթե դուրս գցենք կամ անտեսենք ընդհանուր անդամները կամ դետերմինանտ-

¹ Н. Ю. Шведова, Детерминирующий объект и детерминирующее обстоятельство как самостоятельные распространители предложения («Вопросы языкознания» (այսուհետ՝ ВЯ), 1964, № 6).

² Օրինակները բաղել ենք Ն. Շվեդովայի վերը նշված հոդվածից։

³ В. П. Малащенко, Детерминанты как общий второстепенный член предложения («Русский язык в школе», 1971, № 5).

ները, ապա դա չի անդրադառնա նախագասությունների իմաստային կողմի վրա, ասույթները անավարտ չեն մնա: Նման դեպքերում տարածական և ժամանակային բնութագրությունները տարածվելով ստորոգյալներից յուրաքանչյուր խմբի վրա՝ չեն կապվում այս կամ այն բայի հետ: Այսպիսով՝ «որևէ բառի հետ համակարգային կապի բացակայությունը և շարահյուսական ինքնավարությունը թույլ են տալիս նրանց (դետերմինանտներին — Ա. Պ.) գուրգորվելու նախագասության կառուցվածքա-իմաստային հիմքի հետ՝ կապված չլինելով նախագասության մնացած բոլոր բաղադրամասերից ոչ մեկի հետ»⁴: Դետերմինանտի ցույց տված այս հատկությունը համարվում է նրա ամենակարևոր առանձնահատկությունը:

Ն. Շվեդովան դետերմինանտների քերականական բնորոշ հատկանիշներից մեկը համարում է նրանց որոշակի տեղը կամ դիրքը նախագասության կազմում: Նրա կարծիքով՝ դետերմինանտների բնականոն դիրքը նախագասության բացարձակ սկզբում գտնվելն է կամ անմիջականորեն գլխավոր անդամներին մոտ լինելը, և բնականոն չէ նրանց դիրքը, երբ հանդես են գալիս, օրինակ, նախագասության վերջում: Հմատ. Նա ինձ դուր չի գալիս իր բոլոր արժանիքներով հանդես: Նշվում է, որ դետերմինանտի վերջադաս դիրքը սովորաբար կապված է նրա հրատապության հետ: Այո՛, հաճախ հրատապության խնդիրներն են պայմանավորում և կանխորոշում նախագասության կազմում հանդես եկող այս կամ այն անդամի տեղը (բացառությամբ որոշային գործառույթով հանդես եկողների), և այդ իմաստով դետերմինացվող անդամները ոչնչով չեն տարբերվում նախագասության մյուս անդամներից, որոնք մտնում են ասույթի կազմության մեջ, ինչպես առանձին, այնպես էլ բառակապակցությունների ձևով: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում նախագասության մեջ նրանք կարող են գրավել և՛ նախադաս, և՛ միջադաս, և՛ վերջադաս դիրք՝ կախված այն բանից, թե հաղորդակցական ի՞նչ նպատակի կամ խնդրի է ծառայում այդ նախագասությունը, և թե ինչպիսին է նրանում ասույթի բովանդակության կամ միջուկի (ռեմայի) և ելակետի (թեմայի) հարաբերակցությունը⁵: Դիտարկենք որոշ օրինակներ, երբ դետերմինանտները մի դեպքում գրավում են առաջադաս, մյուս դեպքում՝ միջադաս, մի այլ դեպքում՝ վերջադաս դիրք: Նախադաս դիրքի օրինակներ. «Այնտեղ, շամբուտների խոնավ մթնոլորտում մեջ, թավալվում էր ամեհի վարաղը»: «Ընդարձակ տարածությունների վրա կանաչին էին տալիս համայնական արտերը»: «Դժվարին պահին շատ անգամ ստիպված ես լինում մեծ խալտառակությամբ գիջել նույնիսկ թույլերին ու անօգնականներին»: «Ելնելով այս բոլորից՝ ընկեր Համբարյանին անել խիստ նկատողություն»: Այս նախագասություններում ընդգծվածները կատարում են տեղի, ժամանակի և հիմունքի պարագայի պաշտոններ: Միջադաս դիրք. «Սայու կինը ցնցոտիների մեջ փաթաթված, ձեռքերը խաչած, կանգնել էր կովի մոտ»: «Որոշ մարդիկ թշնամիներից վախենալով՝ անսպասելի տուժում են բարեկամներից, որոնք շատ ավելի վտանգավոր են»: Այս նախագասություններում ընդգծվածները կատարում են ձևի և պատճառի պարագայի պաշտոններ: Վերջադաս դիրքի օրինակներ. «Հավերժ թևերը թափահարելով փախչում էին դեռ ու դեռ»:

⁴ Նույն տեղում, էջ 92:

⁵ И. П. Распопов, О так называемых детерминирующих членах предложения. (ВЯ, Москва, 1972, № 6).

«Հյուրերը ցրվել էին կես գիշերին»: «Ուրիշ վարդեր կշողշողան զարունֆին»:
«Անիծում էին ու զնում, զնում էին մեռնելու՝ ապրելու համար»: «Հասմիկի
խաժագույն աչքերը վառվում էին երջանկությունից»: «Համարայնը մեղավոր
է հենց նրանով, որ հավատացել է Ավագյանին՝ նրա խաղախությունը նախա-
պես ծանոթ լինելով հանդերձ»: «Հետո նրանք շուռ տվեց ու հեռացավ՝ դառն
մտածմունքների մեջ խորասուզված»: Այս նախադասություններում առանձ-
նացվածները դետերմինանտներ են, որոնք հանդես են գալիս ձևի, տեղի, ժա-
մանակի, նպատակի, պատճառի հակառակ հիմունքի պարագայական գոր-
ծառույթներով: Ակտուալ լինելու տեսակետից միջադաս ու վերջադաս դիրքը
րեքված նախադասություններում նույնքան օրինաչափ ու բնականոն է, որքան
բնականոն կլինեն նախադասության ցանկացած որևէ անդամի համար: Մյուս
կողմից՝ բացարձակ առաջնային դիրքը նախադասության մեջ, նույն հանգա-
մանքներում, դետերմինացվող անդամների համար կարող է ոչ միայն անսո-
վոր լինել, այլև ոչ բնականոն: Հմմտ. Որոշեցին հարցը լուծել մենամարտով:
Սենամարտով լուծել որոշեցին հարցը: Ուրիշ վարդեր կշողշողան զարունֆին:
Իհարձիհ ուրիշ վարդեր կշողշողան: Անիծում էին ու զնում, զնում էին մեռ-
նելու՝ ապրելու համար: Մեռնելու՝ ապրելու համար զնում էին ու անիծում:
Այս նախադասությունների համեմատությունից նկատելի է, որ բնականոն են
վերջադաս ձևերը, քան նախադասները: Ավելին, առաջին և վերջին օրինակնե-
րում դետերմինանտի առաջադաս դիրքը իրոք որ անբնական է: Շվեդոյան
պատճառաբանում է, թե նման դեպքերում բառադիրքը որոշողը ոչ թե հրա-
տապության խնդիրներն են, այլ շարահյուսության քերականական կանոննե-
րը: Այս բացատրությունը ևս, ինչպես նկատված է նաև ուրիշների կողմից, հիմ-
նավոր համարել չի կարելի, թեկուզ և այն բանի համար, որ հենց իր՝ Շվեդո-
յայի խոստովանությամբ «շարահյուսության կանոններն ըստ էության թույլ
են ուսումնասիրված»⁶: Դետերմինացվող անդամների մասին որպես կողմնակի
փաստարկ՝ պայմանավորված նրանց շարահյուսությամբ, վկայակոչվում է կա-
ռույցը, որի կազմում համապատասխան ընդհանուր անդամների փոխառե-
ղությունը այս կամ այն պատճառով հնարավոր չէ կամ սահմանափակված է:
Նման սահմանափակումների պատճառը, սակայն, կապ չունի տվյալ բառա-
ձևերի՝ որպես նախադասության ինքնուրույն անդամների գործառույթությունների
հետ:

Դետերմինանտի համար որպես ընդհանուր քերականական հատկանիշ
սովորաբար մատնացույց է արվում նրա կանոնավոր պահպանվողությունը
միևնույն նախադասության բոլոր ձևերում: Հմմտ. Քաղաքում խաղաղ է: Քա-
ղաքում խաղաղ կլինի: Քաղաքում խաղաղ է լինելու: Քաղաքում խաղաղ լինի:
Քաղաքում խաղաղ է եղել: Եթե քաղաքում խաղաղ լինի: Թող քաղաքում խա-
ղաղ լինի: Այստեղ միաժամանակ ցուցում է արվում այն մասին, որ նախա-
դասության մեջ եղանակավորող ու շաղկապական բառերի առկայության դեպ-
քում դետերմինանտը դրվում է եղանակավորող ու շաղկապական բառերից
հետո: «Կանոնավոր պահպանվողությունը միևնույն նախադասության բոլոր
ձևերում», սակայն, չի կարող դետերմինանտի ինքնատիպություն կամ առանձ-
նահատկություն համարվել, քանի որ այն հավասարապես բնութագրական կա-

⁶ ВЯ, 1964, № 6, стр. 84.

⁷ «Грамматика современного русского литературного языка». Москва, 1970, стр. 630.

բող է լինել նաև նախադասության այլ անդամների համար, անկախ այն բանից, տվյալ անդամի մասնակցությունը նախադասության կազմում անմիջական է հասկացվում, թե՞ միջնորդական: Հմմտ. նա կարողում է այս գիրքը: նա կկարդա այս գիրքը: նա կարդալու է այս գիրքը: նա կարդացել է այս գիրքը: նա կարդա այս գիրքը: Եթե նա կարդա այս գիրքը: Թող նա կարդա այս գիրքը: Կամ՝ նա դիմում է ուսուցչին: նա կդիմի ուսուցչին: նա դիմել է ուսուցչին: Եթե նա դիմի ուսուցչին: Թող նա դիմի ուսուցչին և այլն: Այս օրինակներում առանձնացվածները թեև դետերմինանտներ չեն, բայց կանոնավոր պահպանվում են միևնույն նախադասության բոլոր ձևերում:

Այսպիսով, ո՛չ նախադասության մեջ որոշակի դիրքը և ո՛չ էլ միևնույն նախադասության բոլոր ձևերում կանոնավորապես պահպանվողությունը չեն կարող բացառապես դետերմինանտների առանձնահատկություններ համարվել ու չեն առանձնացնում նրանց՝ նախադասության մեջ հանդես եկող այլ անդամներից:

Իսկ ո՞րն է դետերմինանտի յուրահատկությունը: Դետերմինանտի յուրահատկությունը, իրոք, նախադասության մեկից ավելի տարբեր կառուցվածքների հետ զուգորդվելու ընդունակությունն է: Հմմտ. Այսօր անձրև է տեղում: Այսօր անձրևում է: Այսօր ինձ վիճակված չէ հանգստանալ: Այսօր քաղաքից վերադարձել է ընկերս: Այս օրինակներում այսօր ընդհանուր անդամը կամ դետերմինանտը զուգորդվել է թե՛ երկկենտրոն և թե՛ միակենտրոն նախադասությունների հետ: Դետերմինանտի այս յուրահատկությունը, սակայն, ինչպես նրբորեն նկատել է լեզվաբան Ի. Ռասպոպովը, չպետք է մեկնաբանել որպես շարահյուսական անկախության արտահայտություն, այլ իբրև ստորոգյալի հետ նրա ստորադասական կապի մեջ գտնվելու հատկություն՝ անկախ նրա բառական և ձևական արտահայտությունից⁸: Առանձին մասնագետների կողմից, այդ թվում և Շվեդտվայի, փորձ է արվում ապացուցելու, որ դետերմինացվող անդամների ստորոգելիական հիմքը ոչ բառակապակցական բնույթի է, և որ նրանք իբր սկզբունքորեն տարբերվում են, օրինակ, բայական բառակապակցությունների բաղադրամասերի կապերից: Այդ նպատակով բերված օրինակներից բնորոշ է հետևյալը. «Բազում դարեր մարդը գամված է եղել հողին»⁹: Այս նախադասության մեջ, ինչպես հավաստում է Շվեդտվան, բայ-ստորոգյալի և դետերմինանտի միջև չեն կարող հաստատվել նույնիսկ արտաքին կապեր, որպես թե «բազում դարեր» (մեկին մի բանի) «գամված» կենդանի խոսքի մեջ հնարավոր չէ: Այս բացատրությունը, սակայն, չի ապացուցում «բազում դարեր» ընդհանուր անդամի (դետերմինանտի) և «գամված» կրավորաձև չեզոք բայի միջև բառակապակցական կապի բացակայությունը: Երկրորդ՝ դետերմինանտ բառակապակցությունը կարող է բոլորովին էլ չվերաբերել նախադասության ստորոգելիական հիմքին, այլ մտնել, օրինակ, որոշչային շարահյուսական խումբը: Հմմտ. «Բազում դարեր հողին գամված մարդը վերջապես կարողացավ պոկվել նրանից և թռչել լուսնի վրա»: Այս նախադասության մեջ «բազում դարեր» մտնել է որոշիչ դերբայական դարձվածի կազմը և դարձել նախադասության կողմնակի անդամ: Այն հանգամանքը, որ դետերմինանտները ձևականորեն կապված չեն նախադասության այս կամ այն

⁸ И. П. Распопов. *Եղվ. աշխ.*

⁹ «Много веков человек был привязан к земле» (ВЯ, 1964. № 6, стр. 86).

անդամի հետ, հիմք չի տալիս մտածելու, թե նրանք բնավ կապված չեն ստորագրելի հետ: Եթե այդպես լիներ, ապա նրանք չէին կարող նախադասության կազմում հանդես գալ այս կամ այն անդամի գործառնություն: Իրական դետերմինանտները նախադասության մեջ առանձնացվում են ոչ թե իրենց «շարահյուսական ինքնավարությունը», այլ նրանով, որ ստորագրական հարաբերության մեջ լինելով ստորագրելի հետ՝ նրանք վերջինիս հետ կապի մեջ են մտնում, այսպես ասած, վերջահանում են, այսինքն այն բանից հետո, երբ այդ կապի մեջ արդեն մտել են ստորագրելի ստորագրական այլ անդամներ (օրինակ՝ ուղիղ և անուղղակի խնդիրներ, կողմնակի խնդիրներ և այլն) և հենց դրա համար էլ նրանք ամբողջությամբ վերաբերում են նախադասության կառուցվածքա-իմաստաբանական հիմքին¹⁰: Շվեդական «K спорам о детерминирующих членах предложения» հոդվածում¹¹ պատասխանելով ընդդիմախոսներից մի քանիսին՝ վերստին մենք էլ իր նախկին դիրքորոշմանը և չի ընդունում իր ուսումնասիրության առթիվ արված գրեթե ոչ մի դիտողություն: Նա նորից առաջ է քաշում այն կանխադրությունը, թե «Դետերմինացումը, հետևապես և դետերմինանտները շարահյուսական հատուկ կարգեր են և որ այդ իրողությունը ոչ ոք չի կարող վիճարկել: Կեզվի մեջ գոյություն ունի այն, — շարունակում է գիտնականը, — ինչը կարելի է կոչել «դիրքի ուժ»: Տեղի և ժամանակի պարագաները ձգտում են լինել նախադասության բացարձակ սկզբում» (ընդգծումն իմն է — Ա. Պ.): Այդ հոդվածի ամփոփիչ մասում Շվեդական այն միտքն է հայտնում, թե «Դետերմինանտների քերականական կարգը մեր առջև ծառանում է որպես շահագանց ուժեղ և զանգվածային գործածական կարգ: Եվ շարահյուսականների ջանքերը նպատակահարմար է ուղղել ոչ թե նրան, որ «փակեն» այդ կարգը, և դետերմինացող ձևերը, ինչ կերպ ուզում է լինի, կապեն նախադասության մեջ առանձին այս կամ այն բառի հետ, այլ նրան, որպեսզի բացահայտեն այդ կարգի էությունը, տան նրա ձևային և իմաստային լրիվ ու ստույգ բնութագիրը»¹²:

Հաշվի առնելով դետերմինացման երևույթի նկատմամբ առաջացած հետաքրքրությունը, այլև նրա մասին եղած տարակարծությունները, մանավանդ որ լեզվական այդ իրողությունը իր որոշակի դրսևորումներն ունի նաև հայերենում, փորձենք ժամանակակից հայերենի լեզվական տվյալներով պարզել դետերմինանտի «բնավորության» որոշ գծեր և ցույց տալ նրա տեղը նախադասության կառուցվածքային համակարգում: Քննարկվող հարցի առթիվ մենք չենք կարող անտեսել մի կարևոր հանգամանք ևս, այն, որ դետերմինացման երևույթի առանձին ուսումնասիրողներ քննությունը տանելով միակողմանի և ուշադրության կենտրոնում պահելով նրանց՝ հարաբերականորեն անկախ շարահյուսական դիրքը՝ ըստ էության ուսումնասիրության ոլորտից դուրս են թողնում պարագաների և խնդիրների ձևավորման ամբողջ բազմազանությունը, նրանց արտահայտած լրացական առանձնահատկություններն ու խաղացած կարևոր դերը նախադասության կառուցվածքային որոտներում: Մյուս կողմից՝ չէ՞ որ նախադասության կառուցվածքային համակարգում հանդես եկող ամեն մի պարագա և սուբյեկտա-օբյեկտային հարաբերություն արտահայտող յու-

10 И. П. Распопов, *նշվ. աշխ.*, էջ 61.

11 «Филологические науки», Москва, 1973, № 5.

12 Նույն տեղում, էջ 60.

րաքանչյուր անգամ դետերմինանտ չէ: Դետերմինանտ հասկացությունը իմաստավորվել կարող է միայն նախադասության մեջ. խոսքից դուրս, նախադասությունից դուրս չի կարող դոյություն ունենալ ո՛չ դետերմինանտ և ո՛չ էլ առհասարակ նախադասության որևէ անդամ: Նախադասության ամեն մի անդամ, այդ թվում և դետերմինանտը, իր գոյը կարող է հաստատել միայն շարահյուսական մակարդակում, այսինքն այն ժամանակ, երբ հարաբերության մեջ է մտնում նախադասության կառուցվածքային հիմքում ընկած այլ բառի (բառերի) կամ բառակապակցության հետ: Նախադասությունից դուրս այսպես կոչված «ազատ շարահյուսական ձևեր» և «անազատ շարահյուսական ձևեր»¹³ հասկացությունները ոչնչով չեն հիմնավորված:

Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, ուսերենում դետերմինանտներից շատերը ձևավորվում են անվանական ստորոգյալների մոտ, իսկ ժամանակակից հայերենում՝ անվանական-բայական բաղադրյալ ստորոգյալի առկայությամբ: Հմտ. ուսերեն. «Отдельно все это—мелочи», «Всюду флажки». Հայերեն. «Առանձին՝ այդ ամենը մանրուք են»: «Ամենուրեք դրոշմեր են»: Բայց, այնուամենայնիվ, նախադասության ընդհանուր անդամներ կամ դետերմինանտներ ժամանակակից հայերենում սովորաբար հանգես են գալիս չեզոք և կրավորաձև չեզոք բայերի մոտ, որոնցից ավելի հաճախակի են՝ հավատալ, տեղալ, փախչել, մնալ, դուրս գալ, նստել, լինել, խաղալ, ամուսնանալ, բարձրանալ, հիանալ, բացվել, պատրաստվել, փոխվել, հաջողվել, մաշվել, պահանջվել, ցրվել, վառվել, գամվել, կապվել բայերը: Սակավադեպ ընդհանուր անդամներ նկատվում են նաև ներգործական բայերի մոտ՝ նրանց իմաստի թելադրանքով: Դրանցից են՝ տանել, պահանջել, բերել, գնել, բարձրացնել, թաղարկել, ուռնել, լուծել, մոռանալ և այլն: Հմտ. Առավոտյան մենք տեսանք շոգենավը: Հանուն արդարության մենք պահանջում ենք խիստ դատավճիռ հանցագործի նկատմամբ: Նման ձևերում դետերմինանտի առանձնացումը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ նախադասության կազմում եղած խնդիրները խոսողի կամ լսողի ուշադրությունը անմիջաբար ուղղում են իրենց վրա՝ ետին պլան մղելով պարագաների առկայության փաստը: Բացի դրանից, նման կաղապարներում կարևոր նշանակություն ունի նրմանապես դետերմինացվող բառի բառական նշանակությունը: Օրինակ՝ ամենուրեք տեղի մակբայը իր արտահայտած ընդհանրական իմաստին համապատասխան կարող է զուգորդվել նախադասության տարբեր կառուցվածքի սխեմաների կամ մոդելների հետ: Հմտ. Ամենուրեք ուրախություն է: Ամենուրեք եռուզեռ է: Ամենուրեք շնչել կարելի է: Ամենուրեք սկսվել են գարնանային աշխատանքները: Ամենուրեք հասել են բարձր արդյունքների:

Դետերմինանտների կազմավորմանը զգալապես նպաստում են նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները, ասույթի կոնկրետ նպատակադրումը, խոսքային միջավայրը, բայերի պարագահայց բնույթները և այլն: Հաճախ միևնույն բայ-ստորոգյալի մոտ հանդես եկող անդամը մի դեպքում դետերմինացվում է, մյուս դեպքում՝ ոչ: Պարագայական լրացումները, ըստ մեծի մասի, չեն դետերմինացվում:

¹³ Г. А. Золотова, О синтаксической форме слова («Мысли о современном русском языке», М., 1969, стр. 60).

1. Երբ պարագան ունի որոշիչ կամ հատկացուցիչ լրացումներ, կամ երկուսն էլ միաժամանակ: Օրինակ՝ տեղի պարագաներ՝ «Մի՞թե նրանցից ամեն մեկի համար չի գտնվի վայելչության մի անկյուն այս ազատ լեռների մեջ, այս սիրուն ջրերի ափին»: «Ինչ լավ է, որ գուշես ապրել սիրո արվարձաններում»: «Թույլ տուր սուզվեմ քո աչքերի անդունդը խոր»: «Լեռներ դարձավ հրամանատար և մտավ կուսակցության շարքերը»: Ժամանակի պարագա՝ «Դաշտում այնպիսի անդորր էր, որ թվում էր թե մնացել էր նախաստեղծ ժամանակներից»: «Հարյուրավոր տարիներ ի վեր բոլոր պապերիս ոսկորներն են դիզված»: «Հետագայում, լեզվի պատմական զարգացման ընթացքում, բառի ներքին ձևի ջնջման հետ մեկտեղ կարող է մոռացության տրվել և տվյալ առարկան»: Պատճառի պարագա՝ «Պարոն Հարունյանը ակամայից շփոթվեց նրա հանկարծակի հայտնվելուց և առավելապես նրա գեղեցիկ աչքերից»: «Վասակի սիրտը ճըմըլվեց այրող զգացումների ծանուխյան տակ»: Նպատակի պարագա՝ «Երևան եմ գնում և ես կամբարյանի գործով»: Ձևի պարագաներ՝ «Բայց առաջին համբույրը, օրինակ, միշտ լինում է այնպիսի շփոթմունքի մեջ, որ դու չես զգում դրա ամբողջ երանությունը»: «Իմ սուր նանկերից ճանաչեց նա ինձ», «Ես ակամքներից իմացա նրան»: «Հավերժ անկեղծորեն զարմացած էին իրենց ձագերի տարօրինակ տեսքով»:

Այս նախագասություններում առանձնացված անգամները դեմոկրատիաներ չեն և չեն կարող համարվել «ազատ շարահյուսական ձևեր» կամ այսպես կոչված «շարահյուսական ինքնուրույն ընդարձակիչներ», քանի որ առանց դրանց նախագասությունները չեն ամբողջացվում, մտքերը մնում են թերի: Հմմտ. Ես գնում եմ և ես կամբարյանի...: Եվ ես գտնվում էր երջանիկ...: Իմ սուր... հաճախեց նա ինձ: Ես... իմացա նրան: Նման կառուցվածքներում պարագայական լրացումները նույնքան կարևոր են, որքան նախագասության կառուցվածքային հիմքում հանդես եկող տղիղ և անուղղակի խնդիրները:

2. Երբ պարագան արտահայտվում է հարցական-հարաբերական գերանվամբ և գտնվում է դիմավոր բայ-ստորոգյալի մոտ կամ նրա ոլորտում: Նման դործածություններում պարագան սովորաբար ոճական նշանակություն է ստանում կամ ծառայում է հուզաարտահայտչական նպատակի: Հմմտ. «Ուրեմի՞թե թագեմ ես իմ դարդը, Չոր գլուխս տափին տալով»: «Արքաների հետ խոսելու համար Սիրուշը ե՞րբ է ժամանակ ճարում»: Այս նախագասություններում ևս ընդգծվածները ընդհանուր պարագաներ չեն, այսինքն՝ դեմոկրատիաներ, ուստի մենք չենք կարող դրանք անտեսել կամ, ինչպես սովորաբար ասում են, դուրս գցել, քանի որ առանց դրանց միտքը մնում է թերի կամ փոխվում է ասույթի իմաստը: Հմմտ. «Ուրեմի՞թե թագեմ ես իմ դարդը» և «Թագեմ ես իմ դարդը»: «Արքաների հետ խոսելու համար Սիրուշը ժամանակ հարում է»: Այս նախագասություններից, օրինակ, առաջինում արտահայտվում է այն միտքը, թե ինչպես հուսախաբ, հոգսերի ու վշտերի ծանրության տակ կթացող բանաստեղծը ստեղծված իրավիճակից դուրս գալու ելք չգտնելով՝ հարցով դիմում է Արաղին: Հանդիպադիր նախագասության մեջ, ուր հանված է դերանուն պարագան, կորչում է ոչ միայն խոսքի հուզաարտահայտչական կողմը, այլև շրջվում է ասույթի վերացարկված նշանակությունը՝ դառնալով սովորական, առարկայական: Երկրորդ նախագասության մեջ էլ ցույց է տրվում, որ արքաների հետ խոսելու համար Սիրուշը ժամանակ չունի, ժամանակ չի գտնում:

մինչդեռ առանց դերանուն պարագայի ստացվում է այնպես, որ արքաների հետ խոսելու համար Սիրուշը ժամանակ ունի: Այսպիսով, զուգադիր՝ պարագայով և անպարագա կառույցներն արտահայտում են միանգամայն հակադիր հասկացություններ, հակադիր մտքեր:

3. Երբ պարագային նախորդում են շարժում ցույց տվող կամ «հանգրվան» պահանջող շեզոք ու կրավորաձև շեզոք պարագահայց բայեր, ինչպես՝ մտնել, անցնել, լվացվել, թեփվել, ուղղել (թեթել), դիմել (գնալ), ընկնել, հասնել, գալ, գնալ, շրջել և այլն: Օրինակ՝ «Արտակ Ռշտունին իր հետիններով հասավ տուն երկրորդ օրը»: «Հարությունյանը օգտվում էր յուրաքանչյուր հարմար առիթից և գնում շրջկենտրոն՝ Աղասի Միսակյանին և Վարդանյանին տեսություն»: «Նորից եկա այցելության գործարանի պարիսպներին»: «Մի կտոր արև ընկել էր լճի մեջ և ալիքների ձեռքն ընկած կայծկլտում էր կապույտ ջրերի վրա»: «Հասմիկը շրջեց շուկայում, փողոցներում, բուլվարներում և այլ զբոսայգիներում»: «Շատերը ներսում տեղ չգտնելով լցվել էին կողքի սենյակները և կամ խոնվել բաց լուսամուտների տակ»: «Հայերի ձախ թևի դիմաց թանձրանում է զորքերի մի ուժեղ համագունդ»: «Հենր քայլերն ուղղեց դեպի տուն»:

Ցույց տրված բայ-ստորոգյալների մոտ առանձնացված պարագաները նախադասության կազմում անհրաժեշտ են, քանի որ առանց դրանց արտահայտած մտքերը մնում են առկախ, Հմմտ. նա կառք նստեց և դիմեց...: Շատերը ներսում տեղ չգտնելով լցվել էին կողքի... և կամ խոնվել բաց...: Լեռներ փայլեցն ուղղեց...: Սակավադեպ ընդհանուր անդամ շահանդիսացող պարագան կարող է արտահայտվել նաև շարժում (արտաքին կամ ներքին) ցույց տվող ներգործական բայերի իմաստի թելադրանքով: Հմմտ. «Մանուշն ու Արևիկը իրենց նետեցին կատաղած ջրի մեջ»: «Կապույտ վերմակի տակ Անժիկն իրեն զգում էր փաղափում»: Նախադասության նմանօրինակ կաղապարներում ևս պարագաների առկայությունը պարտադիր է:

4. Երբ պարագան հանդես է գալիս բարդ, սովորաբար, համադասական նախադասության կազմում՝ զեղչված ստորոգյալին առընթեր (կամ նրա մոտ): Օրինակ, «Ամռանը գնալու ենք ծովափ, իսկ ձմռանը՝ էֆսկուրսիայի»: «Նրա անդնդախոր ձորերի մեջ ցերեկը տիրում է խորին լռություն, իսկ գիշերը՝ անվերժանելի խավար»: «Տիկինը նստեց ամուսնու կողքին, իսկ ես ու ընկերս՝ նրանց հանդեպ»: Սրանք մեծ մասամբ հակադրական հարաբերություն արտահայտող նախադասություններ են, որոնք կապակցված են լինում իսկ հակադրական շաղկապով: Նման ձևերում շաղկապական բառերն ու զեղչված ստորոգյալները նախադասության կազմում պարտադիր են դարձնում պարագաների գործածությունը:

5. Երբ առանց պարագայի նախադասության մնացած մասը իր կառուցվածքա-իմաստային հիմքով կարող է այլ իմաստ արտահայտել: Օրինակ՝ «Հիմա մարդիկ ավելի ուշ են ծերանում, իսկ ոմանք՝ բոլորովին»: «Նա սովոր է շուկա գնալ միայն առավոտները»: «Մարիամի խոսքի վրա կանայք նորից ծիծաղից թուլացան»: Կառուցվածքային այս ձևերում նույնպես ասույթներն առանց պարագայական անդամների անավարտ կմնան կամ էլ այլ նշանակություն կունենան:

6. Երբ պարագան երկրորդական նախադասության մեջ փոխարկվում է հարաբերական դերանվամբ արտահայտված ենթակայի կամ էլ երբ պարագան մի կողմից բաղդատական հարաբերության մեջ է նախադասության կազմում

հանդես եկող մի այլ անդամի հետ, մյուս կողմից՝ երկրորդական նախադասության մեջ այն դառնում է խնդիր: Նախ առաջին դեպքի առիթով դիտարկենք հետևյալ նախադասությունը. «Կամսարյանը նստած էր մի կառփում, որն անցնում էր տեղ-տեղ խորդուբորդ խճուղով»: Այս նախադասության մեջ մի կառփում տեղի պարագան երկրորդական նախադասության մեջ դարձել է ենթակա՝ արտահայտված ու հարաբերական դեբանվան որոշյալ ուղղականով: Պարագան հանելու դեպքում նախ գլխավոր նախադասության միտքը կմնա առկախ, մյուս կողմից՝ երկրորդական նախադասությունը չի կարող հարաբերակցվել գլխավորին: Հմմտ. Կամսարյանը նստած էր..., որն անցնում էր տեղ-տեղ խորդուբորդ խճուղով: Երկրորդ դեպքի համար քննենք հետևյալ նախադասությունը. «Երբեք կյանքն այնքան քաղցր, անցյալն այնքան լավ ու գեղեցիկ չեն թվում մարդուն, ինչպես նախատամարտից առաջ, երբ նա պիտի մասնակցի»: Այս նախադասության մեջ «ճակատամարտից առաջ» ժամանակի պարագան ինչպես բառի շնորհիվ նախ բաղդատական երանգ է ստացել, երկրորդ՝ երկրորդական նախադասության մեջ այն փոխվել է հանգման անուղղակի խնդրի՝ արտահայտված հարաբերական ու դերանվան տրական հոլովով, որը միաժամանակ հանդես է եկել որպես երկրորդական նախադասությունը գլխավորին կապակցելու միջոց: Եթե զանց առնվի առանձնացված պարագան, ապա ամբողջ ասույթի իմաստը կքայքայվի: Հմմտ. Երբեք կյանքն այնքան քաղցր, անցյալն այնքան լավ ու գեղեցիկ չեն թվում մարդուն, ինչպես..., որին նա պիտի մասնակցի: Կրկնում ենք՝ խոսքը վերաբերում է տվյալ կառույցին, նախադասության այլ տիպարներում մեր ցուցադրած նախադասության գլխավոր բաղադրիչը կարող է հանդես գալ, օրինակ, ուղիղ խնդիր երկրորդական նախադասության գործառնություն: Հմմտ. «Դուք շատ անգամ եք ասել, թե երբեք կյանքն այնքան քաղցր, անցյալն այնքան լավ ու գեղեցիկ չեն թվում մարդուն»: Նախադասությունների և նախադասության անդամների նմանօրինակ փոփոխությունները կապված են նախադասության կազմում շարահյուսական նոր հարաբերությունների առաջացման հետ:

Ավարտելով մեր խոսքը չդետերմինացվող պարագաների մասին, անցնենք սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտների հարցի քննությանը: Լեզվական իրակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտները այնքան էլ տարածված չեն լեզվի քերականական կառուցվածքում, նրանք գործածության հաճախականությամբ և ձևավորման դրսևորումներով զիջում են պարագայական ընդհանուր անդամներին: Բայց մյուս կողմից՝ սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտների արտահայտած հարաբերությունները նրանց մեջ հաճախ հանդես են գալիս միաձուլված և դառնում անբաժանելի: Քննարկվող բնույթի դետերմինանտները սովորաբար արտահայտվում են գոյականների, գոյականացված բառերի և առարկայական դերանունների տրական հոլովով կամ տրականով և առանց, համար, հետ և այլ կապերի հարադրությամբ: Հմմտ. Նրան հանգստանալ է պետք: Ամեն մեկին էլ ձախորդություն կարող է պատահել: Մեզ քիչ ժամանակ է մնում մինչև տարեվերջյան քննությունները: Ձեզ հետ կատակ չեն անում: Այս նախադասություններում առանձնացվածները սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտներ են համարվում: Սուբյեկտա-օբյեկտային դետերմինանտներից առանձնապես հետաքրքրական են այնպիսիները, որոնք ձևով տարածական են, իսկ իմաստով՝ սուբյեկտա-օբյեկտային, Օրինակ՝ Համագումարում քննարկվել

են բազմաթիվ կարևորագույն հարցեր: Պլանների կատարման ուղղությամբ կոլտնտեսություններում ճիշտ են վարվել: Այս նախադասություններում առանձնացվածները ձևավորմամբ տարածական են, իսկ իմաստով՝ սուբյեկտաօբյեկտային: Նմանօրինակ դետերմինանտները դուրի՛ն կարող են փոխարկվել ենթակաների,՝ եթե նախադասությունների կառուցվածքում շարահյուսական նոր հարաբերություններ առաջանան: Հմմտ, Համագումարում քննարկվել են բազմաթիվ հարցեր և Համագումարը քննարկել է բազմաթիվ հարցեր: Կոլտնտեսություններում ճիշտ են վարվել և Կոլտնտեսությունները ճիշտ են վարվել:

Նույն պայմաններում այդպիսի հարաբերությունները օրինաչափ են նաև օբյեկտային դետերմինանտների համար: Հմմտ, Երկար անհյուրընկալ գիշերին վերջ տրվեց և Երկար անհյուրընկալ գիշերը վերջացավ: Ինձ առանց քեզ քուն ու հանգիստ չկա և Նա առանց քեզ քուն ու հանգիստ չունեմ: Ենթ մենակ չի հաջողվի այդ խնդիրը լուծել և Դու մենակ չես կարող այդ խնդիրը լուծել: Խավարի մեջ նրանց դեմքերը շրջապատողներին նկատելի չէին և Խավարի մեջ նրանց դեմքերը շրջապատողները չէին նկատել¹⁴:

Բերված օրինակների մեծ մասում սուբյեկտաօբյեկտային դետերմինանտները գրավել են առաջադաս դիրք, սակայն դա չի նշանակում, թե նրանք չեն կարող գործածվել միջադաս կամ վերջադաս: Պարագայական դետերմինանտների առիթով ինչպես նշվել է, ընդհանուր անգամի համար դիրքափոխական հանգամանքը կախված է միտք հաղորդողի նպատակադրումից, իրադրությունից, տրամաբանական շեշտից և այլն: Սուբյեկտաօբյեկտային դետերմինանտները նույն հաջողությամբ կարող են հանդես գալ ինչպես միջադաս, այնպես էլ վերջադաս դիրքում: Հմմտ, Հանգստանալ նրանց պետք է: Հանգստանալ պետք է նրան: Ձախորդություն ամեն մեկին էլ կպատահի: Ձախորդություն կպատահի ամեն մեկին և այլն:

Այսպիսով, լեզվի քերականական կառուցվածքում դետերմինանտները որքան էլ ակտիվ դեր ու գործառնություն ունենան, այնուամենայնիվ, նրանք շարահյուսական հատուկ կարգեր չեն, քանի որ չունեն իմաստազատիչ հատկանիշներ, որոնցով տարբերվելիս իբրև առանձին կարգեր: Դետերմինանտները մտնում են նախադասության կառուցվածքային համակարգի մեջ, որպես ընդհանուր անգամներ՝ պարագայական և խնդրային գործառնություններով, անշուշտ, դրսևորելով նաև որոշ յուրահատկություններ, որոնք սակայն, ամենից առաջ, պայմանավորված են ստորոգյալի հետ նրանց հարաբերակցվելու եղանակով և պարագահայց ու խնդրահայց բայերի բնույթով կամ բնավորությամբ:

ДЕТЕРМИНИРУЮЩИЕСЯ И НЕДЕТЕРМИНИРУЮЩИЕСЯ ЧЛЕНЫ ПРЕДЛОЖЕНИЯ

А. М. ПОГОСЯН

Р е з ю м е

Согласно Шведовой и другим авторам, детерминанты—такие самостоятельные синтаксические единицы, которые в различных языковых

¹⁴ Նախադասության անգամների փոխակերպական գործառնությունների մասին մանրամասն տե՛ս Ն. Պ ա ո լ ո ս յ ա ն, Եարտհյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:

структурах связываются не с тем или иным членом, а относятся ко всей структурно-смысловой основе предложения.

Отдельные исследователи вопроса детерминации интерпретируют его односторонне, по существу оставив вне поля зрения все разнообразие формирования дополнений и обстоятельств, проявляемые ими особенности дополнения и их роль в цепном сплетении предложения. С другой стороны, ведь не каждое обстоятельство и не каждая единица, выражающие субъектно-объектное отношение, могут быть детерминантами. Часто при наличии глагола-сказуемого слово в одном случае детерминируется, в другом—нет.

В грамматической структуре языка детерминанты, сколь бы активную роль они не играли, на наш взгляд, все же не являются особыми синтаксическими категориями, поскольку не имеют признаков смыслового отличия в качестве самостоятельных категорий. Поэтому детерминанты входят в структуру предложения на правах общих членов в виде обстоятельств и дополнений, одновременно проявляя некоторые особенности, обусловленные прежде и чаще всего их соотношением со сказуемым и характером или поведением переходных и непереходных глаголов.